



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26. 295

Հրատարակութիւն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղատնտեսական
Կոոպերատիվների Միութեան — «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

334.6: ~~6381~~

2-24

Մ Ե Ղ Վ Ա Բ Ո Ւ Յ Ծ Ն Ե Ր Ի
Կ Ո Ո Պ Ե Ր Ա Տ Ի Վ Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն



05.06.2013

531.6:638.1
2-24

05 JAN 2010

Հրատարակչություն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղաբնակչության
Կոոպերատիվների Միություն — «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

Մ Ե Ղ Վ Ա Բ Ո Ւ Յ Ծ Ն Ե Ր Ի
Կ Ո Ո Պ Ե ր Ա Տ Ի Վ Ը Ն Կ Ե ր Ո Ւ Թ Յ Ա Ն
Կ Ա Ն Ո Ն Ա Դ ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1008
38570



Լենինականի Տեղ. Տնտ. տպարան
1924 թ.

ՄԵՂՎԱԲՈՒՅԾՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. հիմնվում է

և գործելու յե

դավառում:

Ընկերության վարչությունը գտնվում է.....

§ 2. Մեղվաբույծների կոոպերատիվ ընկերության նպատակն է նպաստել մեղվաբուծական տնտեսության արտադրության բարձրացմանը և ընկերության անդամների մեղվաբուծական արհեստի զարգացմանը.

ա) Մատակարարել նրանց մեղվաբուծության համար անհրաժեշտ պարագաներ.

բ) Կազմակերպել նրանց աշխատանքի արդյունքների վերամշակման ու վաճառահանման գործը.

գ) Վարկավորել անդամներին սրանց մեղվաբուծական տնտեսությունը բարելավելու և բարձրացնելու համար.

դ) Տարածել գյուղատնտեսության վերաբերյալ ոգտավետ գիտելիքներ իր գործունեություն շրջանում:

§ 3. Յերկրորդ հոդվածում հիշված նպատակներին հասնելու համար ընկերությունն իրավունք է վերազանդում.—

ա) Հայթայթել ընկերության և անդամների անհրաժեշտ գործիքներ, ինվենտար, մեղվարուծական պտրագաներ, մայրեր (Շթագունիս), մեղրատու բույսերի սերմեր և մեղվարուծությանն անհրաժեշտ այլ առարկաներ.

բ) Կազմակերպել ցուցադրական և արդյունարարական մեղվանոցներ, մայրերի բուծարաններ, պարտեզներ, բանջարանոցներ և բոստաններ, կազմակերպել ընկերության արտերի, պարտեզների և բանջարանոցների միասնական մշակում, զբաղվել լավ տեսակի մայրեր բազմացնելու, ինչպես և մեղրատու բույսերի սերմերի անասկներն ազնվացնելու գործով.

գ) Ունենալ արհեստանոցներ արհեստական սուժաթերթեր, փեթակներ և այլ մեղվարուծական պարագաներ պատրաստելու համար, նույնպես մեղվարուծական նույթեր վերամշակող ձեռնարկություններ:

դ) Իր անդամների աշխատանքի արտագրությունների վաճառքը կատարել.

յե) Ունենալ պահեստներ և խանութներ:

§ 4. Ընկերությունն իրավունք ունի որինական բոլոր միջոցներով գույքեր ձեռք բերել և ոտարացնել, պայմանագրեր կնքել, փոխառություններ անել, պարտավորություններ հանձն առնել, նվիրաբերություններ ընդունել, հայցեր հարուցել, գատարաններում հանդես գալ իրեն պատասխանատու կողմ և ընդհանրապես ողջովում և իրավական անձի բոլոր իրավունքներով:

§ 5. Ընկերության պարաքերի հատուցումն ապահովվում է նրան պատկանող բոլոր շարժական և

անշարժ գույքերով, պրամագլիտով և սույն կանոնադրություն հոդ. 19-ով սահմանած անդամների լրացուցիչ պարտականություններ:

§ 6. Ընկերությունն իրավունք ունի միությունը կազմել այլ կոոպերատիվ նման ընկերությունների հետ և անգամակցել մասնագիտական կենտրոնին և «Հայդուլկոոպ»-ին:

§ 7. Ընկերությունը պետք է ունենա իր անվամբ կնիք:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ԱՆԻԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 8. Մեղվարույժների ընկերության անգամ կազմող են լինել յերկու սեւի 18 տարեկանից վեր անձինք, վորոնք ունեն խորհուրդներում ձայն և վորոնց իրավունքները չեն սահմանափակված գատարանով. անգամ կարող են լինել նաև ընկերության գործունեյություն շրջանում գտնվող իրավական մարմինները՝ արտերներ, կոմունաներ և արտական ու հասարակական հիմնարկներ:

§ 9. Ընկերության անգամ չի կարող լինել մեղվարուծական այլ կոոպերատիվի անգամ:

§ 10. Նոր անդամների ընդունելությունը կատարվում է մեղվարույժների ընկերության ընդհանուր ժողովում, վորը կարող է նախնական ընտրությունը հանձնարարել վարչությանը՝ վերապահելով իրեն հետադուր հաստատման իրավունքը:

§ 11. Ընկերության անգամը պարտավոր է իր ունեցած փեթակների քանակը ցուցակագրել ընկերության վարչության մոտ և հետագայում նրանց թվի մեջ կատարված փոփոխությունների մասին պարբե-

բարար հաղորդելը

§ 12. Ամեն մի անդամ ընկերութեան մեջ տալիս է պարտավորագիր, վեր ինքը պարտավորվում է կատարել սույն կանոնադրութեան բոլոր կետերը և ընկերութեան տված պարտականութեաննները 17 հոգ համաձայն, նույնպես վոր նա անգամ չի նման այլ կոտպերատիվ ընկերութեան:

§ 13. Ընկերութեանն անդամագրվողը պարտավորվում է այն պարտականութեանների համար, վորոնք ծագել են իր անդամագրվելուց առաջ:

§ 14. Ընկերութեան յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ընկերութեանից հեռանալ, այդ մասին տալով գրավոր հայտարարութիւն. յեթե հայտարարութիւնը տվիլ է շրջանառութեան տարին լրանալուց յերեք ամիս առաջ, այդ դեպքում նրա հեռացման որը, վորից հետո նա չի մասնակցում վոր ողորդարին վոր էլ վնասին, հաշվվում է նույն շրջանառութեան տարվա վերջը. իսկ յեթե հայտարարութեանը տալիս է շրջանառութեան տարվա վերջին յերեք ամիսների մեջ, այդ դեպքում նրա հեռացման որը հաշվվում է հաջորդ շրջանառութեան տարվա վերջը և մնում է մասնակից ողորդարին ու վնասին, բայց զբրիվում է արտելի մեջ պաշտոնավարելու և ընդհանուր ժողովներում մասնակցելու իրավունքից, այն որից սկզբած, յերբ նա տվիլ է հայտարարութիւն իր հեռանալու մասին:

§ 15. Ընդհանուր ժողովի վորոշման համաձայն՝ ընկերութեանից հեռացվում են այն անդամները, վորոնք իրենց պարտականութեանները ճշտութեամբ չեն կատարում, կանոնադրութեան և ընկերութեան օրինական հրահանգներին հակառակ և, ընդհանրապես, ի վնաս ընկերութեան են գործում:

§ 16. Ընկերութեանից հեռացված կամ արտաքսված անդամները կարող են վերընտրվել ընդհանուր հիմունքներով:

§ 17. Ընկերութեանից արտաքսված և մեռած անդամի հաշվհարգաբը (բեքսետ) կատարվում է այնպես, ինչպես կամովին հեռացած անդամի հաշվհարգաբը:

§ 18. Ընկերութեան յուրաքանչյուր անդամ կըրում է լրացուցիչ պատասխանատվութիւն ընկերութեան պարտքի համար, այսինքն՝ այն դեպքում, յերբ ընկերութեան գրամագլուխն ու ստացվածքը չեն ծածկում ծախքերը. անդամը լրացուցիչ ներպով պատասխանատու յե յուր փայտվճարների ————— պատիկի չափով:

§ 19. Հեռացած և արտաքսված անդամին, ինչպես և մեռածի իրավահաջորդին, վերադարձվում են փայտվճարները և նույն շրջանառութեան տարվա դիվիդենտը՝ տարեկան հաշվեվութիւնն ընդհանուր ժողովի կողմից հաստատելուց յերեք ամիս հետո, իսկ մյուս գրամագլուխներից և ընկերութեան ունեցվածքից նորա մաս չեն ստանում:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 20. Ընկերութեանն ունի հիմնական, պահեստի և հատուկ գրամագլուխներ:

§ 21. Հիմնական գրամագլուխը կազմում է փայտվճարներից և զուտ ողուտի հատկացումներից հատկացումների չափը սահմանում է ընդհանուր ժողովը:

§ 22. Փայտվճարների չափը օանձանվում է ընկերութեան անգամների ունեցած յուրաքանչյուր փե-

Թակի համար ո. կ.: Անկախ փայերի Թվից՝ անդամն ոգավում ե միայն մեկ ձայնի իրավունքով: Ընկերության այն անդամը, զորն ավելացնում ե իր փեթակների թիվը, պարտաճոր ե վճարել լրացուցիչ փայավճարներ:

§ 23. Պահեստի գրամագրուխը գոյանում ե անդամավճարներից և զուտ ոգուաից արած հատկացումներից այն չափով, ինչ չափով կը վորոշի ժողովը, բայց 20 տակոսից վոչ պակաս, և այն գումարներից, զորոնք գոյանում են ընկերության անգաճների վրա զբված տուղանքների դանձումներից, նաև ընդհանուր ժողովի տրամագրության տակ յեղած զանազան միջոցներից: Պահեստի գրամագրուխը նախատեսնվում ե ընկերության վնասները ծածկելու համար և ծախսվում ե ընդհանուր ժողովի գիտությամբ:

§ 24. Անգամավճարները սահմանվում են յուրաքանչյուր անգամի համար ո. կ.:

§ 25. Հատուկ գրամագրուխներ գոյանում են զուտ ոգուաից արած հատկացումներից՝ ընդհանուր ժողովի սահմանած չափով, և զանազան ընկերություններից ու հիմնարկություններից վերցրած փոխառություններից: Հատուկ գրամագրուխները կազմելու և ծախսելու կանոնները սահմանում ե ընդհանուր ժողովը:

§ 26. Ընկերության անգամների հայցերի առարկա կարող են ծառայել միայն զուտ ոգուաի այն մասը, զորը հատկացրել ե ընդհանուր ժողովը, վորպես պիտիզենա՝ անգամներին բաշխելու համար. իսկ ընկերության ունեցվածքը և նրա գրամագրուխը յենթակա չեն անգամների կոպից հարուցված հայցերին:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

§ 27. Ընկերության գործերը վարում ե ընկերության անգամների ընդհանուր ժողովը, նրա կողմից լծարված վարչությունը և վերստուգիչ հանձնաժողովը:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

§ 28. Ընդհանուր ժողովի զբաղմունքի առարկաներն են. —

- ա) Տարեկան հաշվետվության և առաջիկա տարվա գործունեյության նախահաշվի ու ծրագրի քննությունը և հաստատումը.
- բ) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անգամների թվի վորոշելը և նրանց ընտրելը.
- գ) Բոլոր ընտրյալ պաշտոնավարներին ու ծառայողներին վարձատրություն նշանակելը.
- դ) Վարչության նախագահի և վերստուգիչ հանձնաժողովի անգամների համար մշակած հրահանգների հաստատումը.
- յ) Ընկերության ընտրյալ պաշտոնյանների դեմ դատական գործ սկսելու հարցի լուծումը և իրանց պարտավորությունները խախտող անգամների վրա նշանակող տուգանքի չափը վորոշելը.
- զ) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի դեմ հարուցված գանգատների քննությունը.
- է) Պահեստի գրամագրուխը ծախսելու և ոգուաի ու վնասի բաժանելու վերաբերյալ հարցերի լուծումը:
- ը) Անշարժ սեփականություններ, ձեռք բերելու, զրավ գնելու և ոտարացնելու հարցերի լուծումը.
- թ) կոռպորատիվ մասնագիտական կենտրոն կազմակերպելու կամ նման հարցերի լուծումը.

ժ) Ընկերութեան գործերը լիկվիդացիայի յենթարկելը և վերջացնելը.

ժա) Ընկերութեան գործունեութեան վերաբերող հարցերի մշակման համար հանձնաժողովներ կազմելը.

ժբ) Ընկերութեան գրամազուխները (հիմնական, պահեստի և հատուկ) կազմակերպման համար հատկացումներ սահմանելը.

ժգ) Ընկերութեան գործունեութեան ընդհանուր վերհսկողութիւնը, նրանց հետագա զարգացման սեփականութեան ձևերի վորոշումը և քննութիւնը.

ժդ) Ընկերութեան անդամներին հեռացնելու և հեռացվածներին վերընդունելու հարցի վճռելը.

§ 29. Ընդհանուր ժողովում ամեն մի անդամուների միայն մի ձայնի իրավունք, վորին այդ իրավունքն ուրիշին հանձնելը չի թույլատրվում:

§ 30. Հերթական ժողովը տեղի յե ունենում արեկան մի անգամ, վոչ ուշ քան շրջանառութեան տարին վերջանալուց յերեք ամիս հետո: Արտակարգ ժողովները հրավիրվում ե ըստ կարիքի՝ վարչութեան հոգմից, կամ վերստուգիչ հանձնաժողովի, կամ ընկերութեան անդամների մի տասներորդական մասի պահանջմամբ:

§ 31. Ընդհանուր ժողովը հրավիրվելու ժամանակի ու նրա քննվելիք հարցերի մասին վարչութեանը պետք ե վարորդ տեղեկացնի ընկերութեան անդամներին. բացի դրանից պետք ե աչքի ընկնող տեղերում կախել համապատասխան հայտարարութիւններ, վոչ ուշ քան ժողովի որից մի շաբաթ առաջ:

§ 32. Ընդհանուր ժողովն որինական ե համարվում, յեթե ներկա յե ընկերութեան բոլոր անդամներէ առնվազն մեկ հինգերորդական մասը: Իսկ յերբ ժո-

ղովը հրավիրվում ե վճռելու ընկերութիւնը լուծարքի յենթարկելու, անդամների պատասխանատւութեան չափը լարձրացնելու, վնասներն անդամների վրա բաշխելու, կանոնադրութիւնը փոփոխութեան յենթարկելու և անդամներին ընկերութիւնից հեռացնելու վերաբերյալ հարցերը՝ այդ դեպքում պահանջվում ե առնվազն բոլոր անդամների կես մասի ներկայութիւնը:

§ 33. Բոլոր հարցերն ընդհանուր ժողովում վճռվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ: Կանոնադրութիւնը փոփոխելու, դրամազուխներ կազմելու, անդամների համար պարտադիր վճարներ սահմանելու, անդամների պատասխանատւութիւնը փոփոխելու, վնասների բաշխման և ընկերութիւնը լիկվիդացիայի յենթարկելու հարցերը վճռելու համար պահանջվում ե յերկու յերորդական ձայների մեծամասնութիւնը:

§ 34. Այն դեպքում, յերբ պահանջված թվով անդամների բացակայութեան պատճառով ժողովն առաջին անգամ չի կայանում, վոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում հրավիրվում ե յերկրորդ ժողովը, վորի վորոշումներն որինական են անկախ ժողովին ներկայեցող անդամների թվից, միայն ի բաց առյալ այն դեպքից՝ յերբ ընդհանուր ժողովը հրավիրվում ե արտելը լուծարքի յենթարկելու համար այս հարցը յերկրորդ և հետագա ընդհանուր ժողովներում վերջելու համար պահանջվում ե առնվազն անդամների մեկ յերորդի ներկայութիւնը և նրանց յերկու յերորդական ձայների մեծամասնութիւնը՝ հակառակ դեպքում ընկերութիւնը շարունակում ե իր գոյութիւնը: Յերկրորդ ժողովում կարող են քննվել այն հարցերը միայն, վորոնք դրված են յեղել նախորդ ժողովի որակարգում:

§ 35. Ժողովը յուրաքանչյուր անգամ յուր միջից ընտրում է նախագահ ու քարտուղար, ըստ վարչության և վերատուգիչ հանձնաժողովի անդամները չեն կարող նախագահել:

§ 36. Վարչության և վերատուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են ընդհանուր ժողովին ընկերության մյուս անդամների հետ համահավասար իրավունքներով, բայց առանց վճարողական ձայնի իրավունք ունենալու, հետևյալ հարցերի քննության ժամանակ.—

ա) նրանց գործունեությունը դնահատության յենթարկելիս:

բ) նրանց համար վարձատրություն նշանակելիս:

գ) Հաշվետվությունը հաստատելիս:

դ) նրանց պատասխանատվության յենթարկելիս:

§ 37. Ժողովի վորտուգիչները գրվում են արձանագրության դրքում և ոտորագրվում նախագահի, քարտուղարի ու առնվազն ժողովի ներկա յեղոյ գրագետ անդամներից յերեքի կողմից: Ժողովին ներկա յեղոյ անդամների անվանացուցակը կցվում է տվյալ ժողովի արձանագրությանը: Որինական վորտուգիչները պարտադիր են ժողովից բացակայող տնդամների համար նույնպես:

§ 38. Ընդհանուր ժողովում ընկերության ամեն մի անդամ իրավունք ունի այս կամ այն հարցի լուծման առթիվ առանձին կարծիք հայտնելու և պահանջելու, վորպեսզի իր այդ առանձին կարծիքը մտքովի արձանագրության մեջ:

Բ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

§ 39. Ընկերության գործերի ամսիջական կա-

ռավարողը վարչությունն է, վորը բաղկացած է լինում առնվազն յերեք անդամից և յերկու անձնափոխանորդներից, վորոնց ընտրում է ընդհանուր ժողովը: Վարչության անդամների հեռանալու կամ բացակայելու դեպքում, նրանց փոխարինում են անձնափոխանորդները:

§ 40. Վարչության անդամներն ընտրվում են մի տարի ժամանակամիջոցով:

§ 41. Վարչության գործերը կառավարելու ներքին կարգն ու կանոնները, ինչպես վարչության անդամներից ամեն մեկի յիազորության սահմանելն ու պաշտոնավարության, վորոշվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված հրահանգով:

§ 42. Վարչությունը հանդիսանում է ընկերության յիազոր մարմինը և վարում է նրա բոլոր գործերն առանց վորևե հավատարմագրերի: Ընկերության բոլոր գրագրությունները տեղի յեն ունենում վարչության անունից նախագահի կամ նրա փոխանորդի ստորագրությամբ:

§ 43. Ընկերության գործերի վերաբերյալ անորինություններ անելու և կատարելու մասը կենտրոնացված է վարչության ձեռքին: Մասնավորապես վարչության պարտականությունն է.—

ա) Ընկերության գործարանների, արհեստանոցների և նման ձեռնարկությունների ընդհանուր ղեկավարությունն ու նրանցում կատարվող աշխատանքների վերահսկողությունը:

բ) Նոր անդամներ ընդունելը՝ ընդհանուր ժողովի տված յիազորությամբ:

գ) Ընկերության ընդհանուր ժողովի վորոշումների յրագործումը:

դ) Ընկերության մթերքների վաճառումն:

յ) Ընկերութեան կարիքների համար անհրաժեշտ պաշարեղանների և նույթների հայթայթումը կանխիկ դրամով կամ ապառիկ և նրանց պահելն ու ծախելը.

զ) Ընկերութեան հասանելիք գումարների ստանալը մասնավոր, հասարակական ու կառավարական ասններից և հաստատութիւններից.

է) Վարպետների ու այլ ծառայողների վարձելն ու արձակելը.

ը) Թղթակցութիւնների ու ծրարների, ապրանքների ու զանազան առաքումների ստացումը յերկաթուղիներից և փոստից.

թ) Ընկերութեան բոլոր գործերը կառավարական և պաշտոնական հիմնարկութիւններում հետապնդելն ու պաշտպանելը.

ժ) Ընկերութեան անդամներին մթերքների արժեքն ու ոգուտը հաշիւելն ու բաշխելը.

ժա) Հերթական և արտակարգ ժողովների հրավիրում.

ժբ) Ընդունել ամեն տեսակի մուտքերն ու վճարումները, ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշիւի և կատարածումը.

ժգ) Կազմել ընկերութեան գործունեութեան վերաբերյալ հաշիւառութիւնը և առաջիկա տարվա յեւրից ու մտից նախահաշիւները.

ժդ) Պահել ընկերութեան անդամների անձնական հաշիւներ՝ հիշելով նրանց մուծած բաժնեվճարների դումարները և ընկերութեան պարտքերի դիմաց՝ նըջանց բաժին ընկնող պատասխանատուութեան չափը.

ժէ) Տալ մուրհակներ, պարտավորագրեր և ընկերութեան անունից կնքել ամեն տեսակի պայմանագրեր ու գործարքներ:

§ 44. Վարչութեան բոլոր անդամները միասին պատասխանատու յեն ընկերութեանը պատճառաբանումների համար:

Սրանից անկախ նրանք նման արարքների ու գանցառութիւնների համար յենթարկվում են պատիժների՝ քրեական որենքների համաձայն: Բայց այն գործերի համար, վորոնք ընդհանուր ժողովի կողմից հանձնարարված են յեղիւ բացառապես վարչութեան անդամներից մեկն ու մեկին, վարչութեան մնացյալ անդամները պատասխանատու չեն: Նման պատասխանատուութիւնից ազատվում է վարչութեան այն անդամը, վորը համաձայն չի յեղիւ վարչութեան վորոշման և յուր առանձին կարծիքը տվել է գրավոր կերպով:

§ 45. Վարչութեան նիստը համարվում է կայացած, յիժե նրան ներկա յեն յերեք անդամ, վորոնց թվում՝ նախագահը կամ նրա փոխանորդը: Վարչութեան անդամներից վորեւէ մեկի հիվանդութեան կամ բուցակայութեան դեպքում նրան փոխարինում է այն անձնափոխանորդը, վորն ընտրութեան ժամանակ ամենից ավելի ընտրողական ձայն է ստացել:

§ 46. Վարչութեան մեջ հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ. ձայների հափտարութեան դեպքում, գերակշռում է նախագահի ձայնը:

§ 47. Վարչութեան անդամը կարող է հեռացվել յուր պաշտոնից ժամանակամիջոցը լրանալուց առաջ ընդհանուր ժողովի վորոշմամբ:

§ 48. Վարչութեան և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ մտնել չեն կարող արյունակցական կապեր ունեցող ազգականները:

§ 49. Վարչութեան դեմ յեղած զանգասները

ուղղվում են ընդհանուր ժողովին:

V I. ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

§ 50. Մեղվարուծական ընկերության վարչության և ծառայողների գործողությունները քննելու և վերհսկելու նպատակով ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տարի ընտրում է վերստուգիչ հանձնաժողով՝ առնվազն 3 անձից և յերկու անձնափոխանորդից:

§ 51. Վերստուգիչ հանձնաժողովի պարտականությունն է.—

ա) Յուրաքանչյուր ամիս ստուգել յեկից ու մըտից գրքերը, հաշվեկշիռն ու դրամարկիւրը.

բ) Վերհսկել վարչության ու ծառայողների կանոնավոր գործավարության վրա.

գ) Տարեկան ընդհանուր ժողովից առաջ ստուգել տարեհաշիվը մատյանների, հաշիվների ու փաստաթղթերի հիման վրա, նմանապես դրամարկիւրն ու գույքը՝ համաձայն գրանցման ու իրական տվյալների.

դ) Քննել վարչության կողմից առաջիկա տարվա համար կազմած նախահաշիվն ու գործունեյության ծրագիրը: Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունները վերստուգությունների և տարեհաշիի ու առաջիկա տարվա գործունեյության ծրագրի քննության մասին ներկայացնում են ընդհանուր ժողովին:

§ 52. Անկախ վերստուգիչ հարձնախմբի վերհսկումից՝ ընկերության գործերը ստուգվում են «Հայ-էյուզկոտոյ»-ի հրահանգիչների ու վերատեսուչների կողմից:

§ 53. Կանոնադրության 44, 45, 46 հոդվածները կիրառվում են վերստուգիչ հանձնաժողովի անդամներին:

04582
001

նկատմամբ նույնպես:

§ 54. Վերստուգիչ հանձնաժողովի դեմ յեղած դանդառներն ուղղվում են ընդհանուր ժողովին, սակայն հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է ներկայացնել նրանց առաջիկա ընդհանուր ժողովին իր բացատրության հետ միասին:

V II. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

§ 55. Վարչությունը պարտավոր է պահել գրքեր, վորտեղ պետք է գրվեն.—

ա) Ընկերության բոլոր շրջանառությունների յիւքն ու մուտքը և դրամարկիւրի մեջ յեղած կանխիկ դրամը.

բ) Ընկերության ամեն մի տեսակի շրջանառության յիւքն ու մուտքն առանձին-առանձին.

գ) Ընկերության ունեցած հաշիվների դրությունը, ինչպես ամեն մի անդամի, անպես եւ հիմնարկությունների ու զանազան անձանց հետ.

դ) Ապրանքների ու մթերքների հաշիվը.

յ) Ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ այլ մատյաններ:

§ 56. Հաշվետվության տարին համարվում է հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30 ը, բայց յեթե ընկերությունը յուր գործունեյությունը սկսել է տարվա ընթացքում, այդ դեպքում հաշվետվության տարին համարվում է նրա գործունեյությունը սկսելու օրից մինչև սեպտեմբերի 30-ը:

§ 57. Շրջանառության տարին լրանալուց վոչ ուշ, քան յերեք ամսվա ընթացքում վարչությունը պետք է կազմի յուր հաշվետվությունը՝ հիշատակելով.—

ա) Ընկերության բոլոր դրամագրութիւնները:

բ) Մթերքներէ, ինչպես նաև զրամական գումարներէ ընդհանուր մուտքն ու յեւթը.

գ) Ընկերութեան ունեցած ստացվածքի ու պարտքի հաշիվը.

դ) Ընկերութեան հաշիվաշիւղ-բալանսը.

յե) Ոգուտներէ ու վնասներէ՝ և զուտ ոգուտի որինակելի բաշխման հաշիվները.

զ) Առաջիկա տարվա նախահաշիվը.

է) Ընկերութեան անդամներէ հաշիվները, հիշելով, թե ամեն մեկը նրանցից վճարան մթերք ե տվել

ը) Յեզ ուրիշ անհրաժեշտ տեղեկութիւններ՝ ընկերութեան գործունեյութեան մասին:

§ 38. Նախ քան ընդհանուր ժողովին ներկայացընելը՝ տարեհաշիվը գրքերով ու փաստաթղթերով ստուգում ե վերստուգիչ հանձնաժողովը: Վոչ ուշ քան յերկու շաբաթ առաջ, հաշիվաթղթից պիտի բաժանվի ընկերութեան անդամներին ծանոթանալու համար: Ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշիվաթղթից պահվում ե ընկերութեան գործերում իսկ նրա պատճենն ուղարկվում ե «Հայգյուղկոոպ»-ին:

ՎՈՒ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՂՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 39. Զուտ ոգուտը բաշխվում ե հետևյալ ձևով. —

ա) Հատկացվում ե հիմնական պահեստի և հատուկ զրամագրութիւններին համաձայն հոդ. 21, 22 և 25-ի.

բ) Հատկացվում ե 25 տոկոսից վոչ ավել, վորպես դիվիդենտ՝ անդամներին, իսկ մնացած գումարն տվելացվում ե ընկերութեան զրամագրութիւններին:

§ 60. Ընկերութեան շրջանառութիւնից առաջացած վնասները ծածկվում են պահեստի զրամագրութիւնով: **Յեթ** և այդ ձևով վնասները չեն ծածկվում՝ ընդհանուր

ժողովին ե թողնվում ծածկել փոյի հաշիվ մյուս զրամագրութիւնների կամ բաժանել ընկերութեան մյուս բոլոր անդամների վրա, ամեն մեկի ունեցած պատասխանատվութեան համաձայն: Յուրաքանչյուր անգամ իր մաս վնասը վճարելու յե վոչ ուշ, քան մինչև տարվա վերջը: Հակառակ դեպքում գանձվում ե դատական կարգով:

IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՄԸ:

§ 61. Ընկերութեանը կարող ե փակվել. —

ա) Ընդհանուր ժողովի վորոշմամբ.

բ) Ընկերութեանը սնանկ հայտարարելու դեպքում.

գ) Յեթ ընկերութեան անդամների թիվը 15-ից պակասում ե:

§ 62. Սույն կանոնադրութեան հոդված 61-ում նախատեսնված կետի համաձայն՝ վարչութեանը պարտավոր ե անհապաղ հրավիրել ընդհանուր ժողով, վորը վորոշում ե ընկերութեան գործերը լիկվիդացիայի յենթարկել և մշակում ե նրա կարգը:

§ 63. Այդ մասին նախորոք տեղեկացվում ե «Հայգյուղկոոպ»-ին և հայտարարվում ե տեղական թերթերում:

■ 64. Ընկերութեան գործերը լիկվիդացիայի յենթարկվում վարչութեան անդամների՝ միջոցով, յեթե ընդհանուր ժողովի կողմից այդ պարտականութեանը չի զրված ստանձին հանձնաժողովի վրա:

■ 65. Լիկվիդացիա անողները ղեկավարվում են վարչութեան անդամների համար սահմանված ընդհանուր կանոններով և այդ հիման վրա պատասխանատու յեն ընկերութեան վնասներ պատճառելու դեպ-

բում. նրանք միաժամանակ յենթակա յին վերստու-
ղիչ հանձնաժողովի վերհսկողութանը:

§ 66. Լիկվիդացիա անողները վերջացնում են
ընկերութան պարտավորությունները, ստանում և
գանձում են ընկերութան պահանջները և բաժանում
են ընկերութան պատկանող ստացվածքը:

§ 67. Նոր պարտականություններ հանձն առնել
լիկվիդացիա անողները կարող են այն դեպքում մի-
այն, յեթե այդպիսի իրավունք վերապահել և նրան
ընդհանուր ժողովը:

§ 68. Յեթե ընկերութան ստացվածքը բավա-
կան չանի բոլոր պարտքերը ծածկելու համար՝ այդ
դեպքում լիկվիդացիա անողները պակասող վճարելիքը
լրացնում են սույն կանոնադրութան համաձայն՝
գանձելով ընկերութան անդամներին:

§ 69. Բաժնեվճարներն անդամներին վերադար-
ձնելը կատարվում և ընկերութան բոլոր պարտքերը
լրացնելուց հետո միայն, և համեմայն դեպս վոչ շուտ,
քան լիկվիդացիա անելու մասին արված հայտարար-
ությունը թերթում տպելու որից մի տարի լրանա-
լուց հետո: Այն գումարները, վորոնք անհրաժեշտ են
ընկերութան վիճելի պարտքերը, ինչպես և այն
պարտքերը, վորոնք վճարելու ժամկետը դեռ ևս չի
հասել, բավարարելու համար՝ հաշվում ու առանձնացը-
նում են լիկվիդացիա անողները:

§ 70. Պարտքերը վճարելուց և բաժնեվճարները
վերադարձնելուց հետո, լիկվիդացիա անողները ընկե-
րութան մնացորդ Պտացվածքն ու դրամադուխները,
ընդհանուր լիկվիդացիոն ժողովի ցուցմունքով, գոր-
ծազրում են կոսպերատիվ ու հասարակական նպա-
տակներին:

§ 71. Ընկերութան գործերը վերջացնելուց հե-

տո, լիկվիդացիա անողները կազմում են իրենց հա-
շիվը, վորը ներկայացվում և ընդհանուր ժողովին ի
հաստատություն՝ վերստուղիչ հանձնաժողովի յեզրա-
կացութան հետ միասին: Նույն հաշվառվությունը
ուղարկվում և «Հայգյուղկոոպ»-ին, նրան և հանձնը-
վում ի պահ նաև ընկերութան բոլոր գույքերն ու
զբքերը:

X. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԾԵՎ ԼՐԱՑՆԵ-
ԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 72. Ընկերութան անդամների ընդհանուր
ժողովը, համաձայն 32 և 33 հոդվածներին, կարող և
փոփոխութան յենթարկել ու լրացնել ներկա կանո-
նագրությունը:

§ 73. Ընկերութան վարչությունը կանոնադրու-
թյան մեջ կատարած բոլոր փոփոխություններին մա-
սին պարտավոր և անմիջապես տեղեկացնել «Հայ-
գյուղկոոպ»-ին և մտքրած փոփոխությունները միայն
վերջինիս կողմից հաստատվելուց հետո՝ ստանում են
օրինական ույժ:

Ընկերության հիմնադիրներ՝

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

X. ...
THE ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...

«Ազգային գրադարան»



NL0197842

